



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 դեկտեմբերի 2016 թվականի N 1327 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ  
ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի միջև 2010 թվականի նոյեմբերի 30-ին ստորագրված N 817-AM, Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջև 2011 թվականի հունիսի 8-ին ստորագրված N 1390P փոխառության համաձայնագրերով իրականացված «Գյուղական կարողությունների ստեղծում» ծրագրի շրջանակներում ձեռք բերված՝ պետական սեփականություն հանդիսացող գույքի կազմից Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ 10.510.095.876 դրամ արժողությամբ գույքը նպատակային նշանակությամբ օգտագործելու պայմանով նվիրաբերել Հայաստանի Հանրապետության Տավուշի, Շիրակի, Վայոց ձորի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի համայնքներին՝ համաձայն հավելվածի.

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրենին և հանձնարարել Հայաստանի Հանրապետության Տավուշի,

Շիրակի, Վայոց ձորի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի և Սյունիքի մարզպետներին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ապահովել համապատասխան համայնքների հետ սույն որոշման հավելվածում նշված գույքի նվիրաբերության պայմանագրերի կնքումը՝ դրանցում սահմանելով, որ գույքային իրավունքների պետական գրանցման և հանձնման-ընդունման գործընթացներն իրականացվելու են Հայաստանի Հանրապետության Տավուշի, Շիրակի, Վայոց ձորի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի համայնքների միջոցների հաշվին:

3. Առաջարկել սույն որոշման հավելվածում նշված համայնքների ղեկավարներին և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը գույքի հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում կնքել գույքի շահագործման պայմանագրեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թ. դեկտեմբերի 22  
Երևան



Հավելված  
ՀՀ կառավարության 2016 թվականի  
դեկտեմբերի 22 -ի N 1327 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ

Կառույցի անվանումը	Հզորություն	Հաշվեկշռային արժեքը (դրամ)
RACP/CW/ICB -2013/054		
ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկա գյուղի գազաֆիկացում	29956 գծմ	382868841
Ընդամենը		382868841
RACP/CW/ICB-2013/057		
ՀՀ Արագածոտնի մարզի Արտենի գյուղի 1 խորքային հորի վերականգնում	110 գծմ խորության խորքային հոր և 1 հատ քլորակայան	30985272
Ընդամենը		30985272
RACP/CW/ICB-2013/062		
ՀՀ Տավուշի մարզի Դեղձավան գյուղի գազաֆիկացում	6605 գծմ	56854310
ՀՀ Տավուշի մարզի Այգեձոր գյուղի գազաֆիկացում	2912 գծմ	31553024
ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի գազաֆիկացում	6278 գծմ	70304332
ՀՀ Տավուշի մարզի Ջուջևան գյուղի գազաֆիկացում	5803 գծմ	66112724
ՀՀ Տավուշի մարզի Պտղավան գյուղի գազաֆիկացում	5434 գծմ	66536014
ՀՀ Տավուշի մարզի Աղավնավանք գյուղի գազաֆիկացում	5317 գծմ	59220339
ՀՀ Տավուշի մարզի Գոշ գյուղի գազաֆիկացում	14682 գծմ	158207063
ՀՀ Տավուշի մարզի Բագրատաշեն գյուղի գազաֆիկացում	11499 գծմ	168664580
ՀՀ Տավուշի մարզի Դեբետավան գյուղի գազաֆիկացում	3893 գծմ	46519194
ՀՀ Տավուշի մարզի Բարեկամավան գյուղի ջրամատակարարում	4911 գծմ ջրատար	73367930
Ընդամենը		797339510

RACP/CW/ICB-2015/066		
ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձորի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	14524.5 գծմ	435289415
ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուրի համայնքի գազաբաշխիչ ցանցի ընդլայնում	11857 գծմ	138600422
Ընդամենը		573889837
RACP/CW/ICB-2015/067		
ՀՀ Տավուշի մարզի Բագրատաշենի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	7130 գծմ	117236390
ՀՀ Տավուշի մարզի Գանձաքարի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	14584 գծմ, 3 հատ խորքային հոր, 1 հատ քլորակայան, 3 հատ ՕԿՁ	526333021
ՀՀ Տավուշի մարզի Սևքարի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	13389 գծմ և 1 հատ աղբյուրակապ	294810293
ՀՀ Տավուշի մարզի Վազաշենի համայնքի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում	8462 գծմ և 1 հատ ՕԿՁ	74027949
ՀՀ Տավուշի մարզի Նավուրի համայնքի գազաֆիկացում	14921 գծմ	292765244
ՀՀ Տավուշի մարզի Իծաքարի համայնքի գազատարի կառուցում	4342 գծմ	83130912
Ընդամենը		1388303809
RACP/CW/ICB-2015/075		
ՀՀ Լոռու մարզի Դսեղի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	13319 գծմ	475857491
ՀՀ Լոռու մարզի Ճոճկանի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	9905 գծմ, 1 հատ ՕԿՁ և 1 հատ պոմպակայան	305983320
ՀՀ Լոռու մարզի Մեծ Այրումի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	5214 գծմ և 1 հատ պոմպակայան	222295598
Ընդամենը		1004136409
RACP/CW/ICB-2015/073-1		
ՀՀ Շիրակի մարզի Բսահակյան գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	8224 գծմ , 1 հատ ՕԿՁ ,1 հատ պոմպակայան և 1 հատ խորքային հոր	164723520
ՀՀ Շիրակի մարզի Շիրակավան գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	7818 գծմ , 1 հատ ՕԿՁ ,1 հատ պոմպակայան	204883750
ՀՀ Շիրակի մարզի Արևիկ գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	14216 գծմ , 1 հատ ջրաճնշիչ աշտարակ	280265080
ՀՀ Տավուշի մարզի Վերին Կարմիր աղբյուր համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	10118 գծմ, 1 հատ ՕԿՁ/ 100լս.մ./, 1 հատ աղբյուրակապ	196058054
ՀՀ Տավուշի մարզի Բաղանիսի համայնքի	4943 գծմ, 1 հատ ՕԿՁ	281610360

ջրամատակարարման համակարգի վերակառուցում	կառուցում, 2 հատ ՕԿՁ վերակառուցում	
ՀՀ Շիրակի մարզի Բագրավանի (Նորշեն) համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	12061 գծմ ջրատար, 1 հատ խորքային հոր, 1 հատ քլորակայան, 1 հատ ՕԿՁ	198787415
ՀՀ Շիրակի մարզի Անիպենգայի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	2552 գծմ ջրատար, 1 հատ խորքային հոր, 1 հատ ջրթափ ավազան	75707784
ՀՀ Շիրակի մարզի Անիավանի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	2879 գծմ ջրատար, 1 հատ ջրաչափական հոր, 1 հատ ՕԿՁ վերակառուցում	43759046
ՀՀ Շիրակի մարզի Ջրափիի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	6718 գծմ ջրատար, 2 հատ ՕԿՁ վերակառուցում, 1 հատ քլորակայան և 1 հատ խորքային հոր	158328170
ՀՀ Արագածոտնի մարզի Լուսազյուղի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	14067 գծմ, 2 հատ քլորակայան, 1 ջրամբար, 4 հատ կապտաժ	462387160
ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավանի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	28009 գծմ, 2 հատ քլորակայան	1242129625
ՀՀ Արագածոտնի մարզի Նոր Եղեսիայի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	8512.08 գծմ ջրատար	354948560
ՀՀ Արագածոտնի մարզի Շենավանի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	19119 գծմ, 2 հատ ՕԿՁ / 500լւ.մ/, 1 հատ քլորացման սարքավորում, 3 հատ հիդրանտային հոր, 1 հատ կապտաժ	615588702
ՀՀ Գեղարքունիքի մարզի Թթուջրի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	9277 գծմ, 7 հատ աղբյուրակապ	209512290
ՀՀ Լոռու մարզի Կաթնաջրի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	15243 գծմ	198367230
ՀՀ Վայոց ձորի մարզի Ռինդի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	19791 գծմ, 2 հատ աղբյուրակապ, 1 հատ ՕԿՁ, 1 հատ քլորացման սարքավորում, 3 հատ հիդրանտային հոր	335524760
Ընդամենը		5022581506
RACP/CW/ICB-2015/073-2		
ՀՀ Տավուշի մարզի Դեբեդավանի համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի վերակառուցում	1773 գծմ ոռոգման ջրատար	82642238
ՀՀ Տավուշի մարզի Արճիսի համայնքի 27 հա հողերի ոռոգման 4 բաժանարարի վերակառուցում	909 գծմ ոռոգման ջրատար	24237493

ՀՀ Տավուշի մարզի Լճկաձորի համայնքի 47 հա հողերի ոռոգման 4 բաժանարարի վերակառուցում	2080 գծմ ոռոգման ջրատար	87867726
ՀՀ Տավուշի մարզի Հաղթանակի համայնքի 32 հա հողերի ոռոգման 4 բաժանարարի վերակառուցում	3521.6 գծմ ոռոգման ջրատար	138584394
ՀՀ Տավուշի մարզի Պտղավանի համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի վերակառուցում	2790 գծմ ոռոգման ջրատար	105166323
ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի վերակառուցում	3831 գծմ ոռոգման ջրատար	85941472
ՀՀ Վայոց ձորի մարզի Գետափի համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի վերակառուցում	3005 գծմ ոռոգման ջրատար	99270856
ՀՀ Վայոց ձորի մարզի Ազատեկի համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի վերակառուցում	4086 գծմ ոռոգման ջրատար	219102905
ՀՀ Վայոց ձորի մարզի Վերնաշենի համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի վերակառուցում	429 գծմ ոռոգման ջրատար	33395722
ՀՀ Վայոց ձորի մարզի Ելփինի համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի վերակառուցում	1770 գծմ ոռոգման ջրատար	80759125
ՀՀ Վայոց ձորի մարզի Արինի համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի վերակառուցում	6176 գծմ ոռոգման ջրատար	104599571
Ընդամենը		1061567825
RACP/CW/ICB-2015/073-3		
ՀՀ Շիրակի մարզի Բսահակյանի համայնքի հասարակական կառույցների ջրահեռացում (կոյուղի)	1921 գծմ	75281362
ՀՀ Շիրակի մարզի Նորշենի (Բագրավանի) համայնքի հասարակական կառույցների ջրահեռացում (կոյուղի)	34 գծմ	16896606
ՀՀ Արագածոտնի մարզի Լուսազյուղի համայնքի հասարակական կառույցների ջրահեռացում (կոյուղի) և արևային էներգիայով ջրատաքացման համակարգի տեղադրում	142 գծմ	14340952
ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր արևային էներգիայով ջրատաքացման համակարգի տեղադրում	Արևային ջրատաքացուցիչների կառուցում	2768213
ՀՀ Շիրակի մարզի Անիպեմզա արևային էներգիայով ջրատաքացման համակարգի տեղադրում	արևային ջրատաքացուցիչների կառուցում	1471693

ՀՀ Տավուշի մարզի Վազաշեն արևային էներգիայով ջրատաքացման համակարգի տեղադրում	արևային ջրատաքացուցիչների կառուցում	1565368
Ընդամենը		112324194
RACP/CW/ICB-2012/034		
ՀՀ Սյունիքի մարզի Խոզնավարի համայնքի գազաֆիկացում	9061.6 գծմ գազատար	136098673
Ընդամենը		136098673
ԸՆԴԱՄԵՆԸ		10.510.095.876

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

